# *Արձանագրություն N 2*

ՀԾԿՀ-25/4-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

22 նոյեմբերի 2024թ.
ժամը 12:30

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արտյոմ Ղազարյանը, անդամներ՝ Նունե Գաբրիելյանը, Մեսրոպ Ղարիբյանը և քարտուղար՝ Հայկ Կոշեցյանը:

## *Օրակարգ*

***Գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հարցման և պարզաբանման մասին***

ՀԾԿՀ-25/4-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Արտյոմ Ղազարյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ 20.11.2024թ.-ին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով պարզաբանման հարցում է ստացվել հետևյալ տեքստով.

«Հարգելի պատվիրատու, Խնդրում ենք պարզաբանել, ճիշտ ենք հասկանու՞մ, որ տվյալ գնման ընթացակարգով նախատեսված ապրանքների ձեռք բերման համար ֆինանսավորումը նախատեսվում է կատարել 2025 թվականին:»

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց ներկայացնել պարզաբանում, հետևյալ տեքստով.

«Հարգելի մասնակից, գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, այն է. «Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:» Հետևաբար՝ ֆինասնավորումը կարող է իրականացնել սահմանված կարգով պայմանագրի կնքումից հետո վեց ամսվա ընթացքում:»

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Արտյոմ Ղազարյան

անդամներ _____ Նունե Գաբրիելյան

_____ Մեսրոպ Ղարիբյան

քարտուղար _____ Հայկ Կոշեցյան